



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 4166

Ապրիլ 4, 1962

Արժանաշնորհ

Տ. Պօղոս Ահնայ. Մանուկեան

Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի

Ս. Յակոբ Եկեղեցւոյ

Ռիչմոնտ.

Սիրելի Տէր Պօղոս,

Ստացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ 1962, Փետրուար 25ին գումարուած համայնքիդ Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Եկեղեցւոյդ պարտաճանաչ ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի Ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.

- Տիարք՝ Տօքթ. ձէք Կարեան
- Փիթըր Կրիւն
- ձէքի Շարիկեան
- Հէրրի Տարխանեան

Կը յանձնարարենք որ որ առաջին առիթով Առաջնորդարան ղըրկէք Ձեր տնտեսական հաշուեկշիռը, որ անընդէտ մոռացմամբ չէիք ներկայած Ձեր տեղեկագրին մէջ:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի